իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա: Այսինքն՝ վիճարկվող հրամանը Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» կետի կիրառման համար անհրաժեշտ երրորդ փաստի առնչությամբ փաստական հիմքեր և պատճառաբանություններ չի բովանդակում, որպիսի պարագայում նշված որոշումը պատճառաբանված գնահատվել չի կարող:

Արդյունքում Դատարանը գտնում է, որ վեճի առարկա հրամանը ենթակա է անվավեր ճանաչման:

6. Դատական ծախսեր և հայցի ապահովում.

ՔԴՕ 101-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՔԴՕ 108-րդ հոդվածի համաձայն. «1. Դատական ծախսերի հետ կապված պահանջները ներկայացվում են բացառապես տվյալ գործի շրջանակներում:

2. Գործին մասնակցող անձանց կրած, ինչպես նաև վճարման ենթակա դատական ծախսերի փոխհատուցման հարցը լուծելիս դատարանը հիմք է ընդունում միայն գործում առկա փաստաթղթերով հիմնավորված ծախսերը:»:

ՔԴՕ 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Անդրադառնալով սույն գործով հատուցման ենթակա դատական ծախսերին, Դատարանը գտնում է, որ հայցը բավարարվելու արդյունքում դատական ծախսը պետք է կրի Պատասխանող կողմը, հետևաբար Պատասխանողից հօգուտ Հայցվորի ենթակա է գանձման պետական տուրքի նախապես վճարված գումարը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 188-189-րդ, 191-192-րդ, 198-րդ, 362-րդ հոդվածներով՝

ՎՃՌԵՑ

1. Թիվ ԵԴ/10058/02/23 քաղաքացիական գործով «ՆԻԿՕ-ՏԵԿ» ՍՊ ընկերության հայցն ընդդեմ պատասխանող ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության՝ բավարարել. անվավեր ճանաչել ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության 09.02.2023թ. թիվ 104-Ա հրամանը՝ «ՆԻԿՕ-ՏԵԿ» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում 2 տարի ժամկետով ներառելու մասով:

2. ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունից հօգուտ «ՆԻԿՕ-ՏԵԿ» ՍՊ ընկերության բռնագանձել 50000 (հիսուն հազար) ՀՀ դրամ նախապես վճարված պետական տուրքի գումարը: Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

3. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակվելու օրվանից մեկամսյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ՝ **ԴԱՆԻԵԼ ՄԽԵՅԱՆ**